Արձանագրություն N 2
ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/16 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան 10 օգոստոսի 2018թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հ. Օհանյան
Հանձնաժողովի բացող անդամներ՝	Ս. Մկրտչյան
	Ս. Շահմուրադյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝	Ա. Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Հ. Նավասարդյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Հ. Օհանյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/16 ծածկագրով հայտերի բացման մասին,
3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
4. Գնման ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին,
5. Գնահատման մասին,
6. Հարցում կատարելու մասին,
7. Գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին,
8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

2. ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/16 ծածկագրով հայտերի բացման մասին
(Հ. Օհանյան)

1. Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

1	«Դիվանյան Փրոդաքշն» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին
(Հ. Օհանյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում Հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են:

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

4. Գնման ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին
(Հ. Օհանյան)

Մասնակցի կողմից առաջարկած պայմանագրի կատարման գինը հետևյալն է.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ			
		Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր	Նախահաշվային գին
1	***«Քաղաքական թոր-շոու» պայմանական անվամբ հաղորդման դեկորացիա***				12 000 000
1	«Դիվանյան Փրոդաքշն» ՍՊԸ	11 580 000		11 580 000	

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

5. Գնահատման մասին
(Հ. Օհանյան)

Առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝	
1	«Դիվանյան Փրոդաքշն» ՍՊԸ	1,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0:

6. Հարցում կատարելու մասին
(Հ. Օհանյան)

ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/16 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.12-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում 8.12-րդ կետի 3-րդ ենթակետում նշված հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0:

7. Գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին
(Հ. Օհանյան)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0:

8. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>

(Հ. Օհանյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/16 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների ամփոփման օրը՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0:

Հանձնաժողովի.

նախագահ՝	Հ. Օհանյան
բացող անդամներ՝	Ս. Մկրտչյան
	Ս. Շահմուրադյան
գնահատող անդամներ՝	Ա. Հակոբյան
քարտուղար՝	Հ. Նավասարդյան